Арм 2/2527
ХИМНИ

V 495/174

Тер-Маркарян

Праздник освящения мурра

Тифлис

1929

# ՀԱՆԴԷՍ

# ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

## ԵՕԹՆԱԼՈՅՍ ԻՒՂՈՅՆ ՄԻՒՌՈՆԻ

Կատարեալ 'ի Քրիստոսակերտ Նախագահ Մայր Եկե-ղեցւոյն Էջմիածնի 'ի ձեռն Ամենապատիւ Սրբազա-նութեան Գերընտիր Գլխոյ Հայաստանեայց Կա-թողիկէ Եկեղեցւոյ Տն Տն ԵՓՐԵՄԻ Երանա-շնորհ Սրբազնատուրբ Կաթողիկոսի ամ Հայոց Նշա-նակրի Ասպետութեանց Մեծին Աղեքսանդրէ Նեւսկւոյ և Մեծին Աննայի առաջներորդ աստիճանաց կայսերութեն Ռուսաց 'ի 11 Նոյեմբերի 1828 յիննետասներորդ ամի Հայրապետութեան Իւրոյ.

Ի Յովսեփայ Վարդապետէ Տէր Արղութեանց Կարբեցւոյ 'ի Միաբանութենէ Սրբոյ Էջմիածնի.



1829 ՏՓԽԻՍ ՌՄՀԸ.

Ի Գործարանի Ներսիսեան Դպրոցի Հայոց՝ ընծայեցեալ յԱզ-նուական Գէորգայ Արծրունւոյ.

Այսպէս ասէ Տէր. ահաւասիկ ես դարձու֊
ցից զվտարանդութիւն յարկացն Յակոբայ,
և գերուե̃ն նորա ողորմեցայց. և շինեսցի քա֊
ղաքն ՚ի բարձրութեան իւրում. և տաճարն
ըստ իրաւանց իւրոց կանգնեսցի։ Եւ ելցեն
՚ի դոցանէ երգիչք և ձայն խաղալկաց, և բազ֊
մացուցից զդոսա՝ և մի՛ նուազեսցին. տարա֊
ծեցից զդոսա և մի՛ նուազեսցին։ Եւ մտանի֊
ցեն դոքա իբրև զառաջինն, և վկայութիւնք
դոցա կանգուն կայցեն առաջի աչաց իմոց։
Եւ հանդէս արարից ՚ի վերայ նեղչաց դոցա.
և եղիցին բռնագոյնք քան զնոսա ՚ի վերայ նո֊
ցա. և իշխան դոցա ՚ի դոցանէ ելցէ։

Երեմ. Լ. 18—21.

ВСЕСОЮЗНАЯ БИБЛИОТЕКА ИМЕНИ В. И. Ленина
345025

# ՀԱՆԴԻՍ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

## ԵՕԹՆԱԼՈՅՍ ԻՒՂՈՅՆ ՄԻՒՌՈՆԻ։

Ծերանազգեցոյն 'ի Մարգարէս Մեծահայր Սաղմոսերգուն Դաւիթ ակնարկեալ յառաջին աղէտս տագնապի նեղելոյն 'ի Բաբելոնեանն գերութենէ Իսրայելեան տոհմի և 'ի վատախորհուրդ հայթհայթանս Թշնամեաց նորա՝ որք ընդ վայր խորամանկէին անյիշատակեալ անժառանգել զնա՝ բերան լեալ նմա և հրճուեալ 'ի հոգետուեալ օրհնաբանութիւն Աստուծոյ, հրաշագործողին զփրկութիւնն մեծ՝ նուագէ. Օրհնեա՛լ է Տէր, որ ոչ ետ զմեզ յորս ատամանց նոցա։ Անձինք մեր ապրեցան որպէս ճնճղուկ յորոգայթէ որսորդաց։ Որոգայթն նոցա փշրեցաւ և մեք ապրեցաք։ Եւ ո՛րպէս. զի Օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն՝ որ արար զերկինս և զերկիր։ Ո՜չ ինչ քաջադէպ մեզ՝ մաշելոցս 'ի ներքոյ դառն լծոյ անագորոյն խաչամարտ ազգին Պարսից՝ քան զայս նուագերգութիւն. Դարք անցին յորէ անկմանէ մեր 'ի չարատագնապ հնոց ծառայութեան անգութ նոր Եգիպտացւոց՝ և ոչ երբէք եղեաք որս ատամանց նոցա. Բազմահնար հաղբք դարանակալութեանց նոցա չքացեալ ընդունայնացան՝ և փրկութիւն մեր յամօթ նշաւակի եհար զորոգայթս նոցա։ Եւ որ սքանչելին է. մաշեալ փշրեցան Թակարդք ապերասանից նց՝ և մեք ապրեցաք օգնականութբ Երեքփառաւորեան Անուան Արարչապետին երկնի և երկրի։

․Աստ․

Աստուածընտիր Մեծափառութիւն Երանաշնորհ Գլխոյ Հայաստանեայցս Եկեղեցւոյ զկնի վերջամեայ վշտագին տարագրութեն իւրոյ 'ի ծոցոյ անարատ Հարսին Քրի Կաթողիկէ Սբյ Էջմիածնի՝ ակներև այցելութք երկնից անմահ Արքային տեսեալ զփրկուէ իւր և զԵկեղեցւոյ և զՀայրենի աշխարհին 'ի չարաչարն գերուէ խաչատեացն Պարսից 'ի ձեռն Աստուածազօր Մեծափառութեան Ամենաբարեպաշտ Ինքնակալ Մեծ Կայսեր ամ Ռուսաց ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ա. Հայաստանեայցս Արքայի և Գերարժան Կուսակալի ՆՈՐԻՆ Բարձր Գերազանց Իվան Ֆէոդորովիչ Պասկեւիչ Պայծառափայլ Կոմսին Երևանայ, 'ի դէպ դատեցաւ նշանաւորել զայս փրկագործութիւն զարմանաքանչ 'ի տարեգիրս Սբյ լուսակերպ Տեառն Փրահիս սրբափայլ օրհնութեամբ եօթնալոյս իւղոյն Միւռոնի:

Արդ՝ 'ի 4 Նոյեմբերի յութերորդ կիւրակէի զկնի Սբյ Խաչին՝ յաւել Քամարարին յընթացս Պատարագին զաղօթսն. [illegible] և [illegible] Յ[illegible] Քրի[illegible], եւն. Երանաւէտ Սրբազնասէր Հայրապետն արկեալ զկուրեամբ զնափորտ պատուական և զեմփորոն՝ սպասահարկութեամբ երկոտասան Եպիսկոպոսաց եւ յաւագ սեղան ամենօրհնեալ Աստուածամօրն և հրամայեաց ընթեռնուլ զաղօթս աւուրն պատշաճեալս. և յաւարտիլն՝ հեղեալ զձէթն յանօթն մաքուր, որ կայր առ եզեր բեմին՝ ընթերցաւ 'ի վն նորա զվերջին աղօթսն. [illegible] Ապա պարածածկեալ զկաթսայն կուսաթիւ նուարտանօք և 'ի վերոյ նորա հանդուցեալ զ Խաչն ճաճանչազարդ, պատուէր ետ շարունակել զընթերցուածս չորից Աւետարանացն մինչև ցօր վերջին օրհնութեանն. և Ինքն առեալ զողջոյն 'ի Քամարարէն՝ էջ 'ի տեղի իւր և եմուտ 'ի պատրաստութիւն ապաշխարութեան.

Յետ այսորիկ հրաման ետ մեզ հրաւիրել 'ի ծածուկ զերևելի իշխանս Երևանայ. կասկածեալ՝ թէ մի՛ գուցէ 'ի հնչիւն հրատարակիլ համբաւոյ սրբագործուե եօթնալոյս իւղոյն Միւռոնի՝ 'ի քաղաքաց և յագարակաց

կաց բռնադատեսցէ Քրիստոնէականն բարեպաշտութիւն գալ խոնարհել հաւատացելոց 'ի ծոց Մնեղաչէն Տաճարիս. և առ պատճառի ձմերանն սառնամանեացս վտանգիլ 'ի ցրտահարութենէ և չկարել ականատես լինել սխրալեացն Արքութեան. թէպէտ այս Հրաման Առաքելապատիւ Ահափառութեան Գերընտիր Օծելոյ Տեառն կատարեցաւ առ 'ի մէնջ մեծաւ երկիւղածութեամբ, սակայն եռանդն Մեծահրաման սիրոյ առ հաւատս Քրիստոսաքարոզ՝ փարատեաց զամ ահ երկիւղի 'ի Քրիստոնէիցն սրտից. և յ 9 է մինչև ցվերջալոյս 10 ին Նոյեմբերի ած, գումարեաց յընդարձակ սրահս Մայր Եկեղեցւոյս, 'ի գլուխս պարսպացն և 'ի տանիս Վեհարանին, շտեմարանաց, խահանոցի և լսելի միաբանութեանն զանհամար բազմութիւն արանց և կանանց, ծերոց և տղայոց և մեծ չափու և հասակի. թէպէտ ինքնայորդոր եկելոցն չէր ինչ պակաս քան զութն հազար անձանց.

'Ի 10 Նոյեմբերի 'ի 6 ժամու յետ միջաւուրն՝ եդեալ հանդէպ Արեւմտից դրանն Տաճարիս զԱւետարանն Աթոռ Քահանայապետին և սփռեալ զպատուական ակումբս 'ի տեղիս համօրէն Ուխտի մանկանց Եկեղեցւոյ՝ հնչեցուցաք երրորդական թուով զյատուկ ձայնս ահեղ զանգակաց հանդիսաւոր տօնից. Իսկ ահա ժողովեցան յԵկեղեցին 18 Եպիսկոպոսք. 51 Վարդապետք. 77 Քահանայք. 24 Սարկաւագունք. 12 Ուրարակիրք և 40 Դպիրք. Սոքա ամենեքեան զարդարեցան 'ի հանդերձս լուսափայլս ըստ իւրաքանչիւր աստիճանի և պաշտաման. և առեալ 12 բուրվառս և զայլ զարդս Քրիստոնէական փայլչունս՝ ելին ընդ առաջ Արքայնակատար Օծութեանն ցմուտս Վեհարանին և կացին դասադաս յաջմէ և յահեկէ հանդերձ բազմութբ նորեկ ուխտաւորաց. Աստանօր ընկալեալ 'ի հանդէս փառաց զՆորանելի Հայրապետն՝ մեծաշուք մեծապատուութբ, երգովք հոգեշարժ շարականաց և հնչմամբ 9 զոյգ ախորժալուր զանգակաց բերեալ հանդուցին յԱթոռն իւր.

Յաւարտ երեկոյեանն ժամերգութեն առ փոքր մի հանդիստ առեալ Սրբի Քահանայապետիս՝ հրաման

ետ

սկսանիլ գեղեցկապաշտօնն՝ հոգենորոգ սրբերգութեամբ և հսկմամբ գիշերն մեծ հանելով 'ի գլուխ յաղօթս Աստուծոյ։ Նորոգք հրաշային բարեպաշտութեան զնայ-լեցուցեալ զԱստուածագումար երամս հաւատացելոց տեսարանաւ սխրագործութեանցն Աստուծոյ, զամենս 'ի յորդահոս արտասուս ուրախամիտ հրճուանաց ընկղմէր· զայլս 'ի լռիկ ոտնկացութիւնս պարապեցուցանէր· զյո-քունս յանմռունչ սաղմոսերգութիւնս դեգերեցուցանէր· և զամենեցուն առ հասարակ զսիրտս յանմատոյց առա-գաստ Երեքսրբեան Աստուածութեանն վերուղղէր·

'Ի բանալ երկնից զլուսանշոյլ դրունս գեղածիծաղ այգուն՝ ահա գունդք քաջամարտիկ Զօրավարաց և մե-ծարու Աստիճանաւորաց Ռուսաց աճապարեցին 'ի գա-ւիթս Տան Տեառն ունելով ընդ իւրեանս զբազմութիւն զօրաց և զզինուորական սրինգս, Թմբուկս, տաւիղս, շե-փորս և զայլ ազգս երաժշտական արուեստականաց։ Ա-ժամ մի շունչ առեալ սոցա 'ի գեղեցկայինն աշխատութեանց, հաւաքեցան այս 'ի Տաճարն Տէրունական՝ ուր արդէն սկսեալ էր պատարագել Բարձրապատիւ նախկին առաջ Լուսարար Ծերունազարդ Սրբազան Յովհաննէս Արք-եպիսկոպոսն Կարբեցի։ Քահանայապետն Մեծ հանդերձեալ 'ի գերապայծառ պճնաւորն Հայրապետական՝ սպասա-հարկութեամբ երկոտասան զգեստաւորեալ Արհեաց՝ եւ յաւագ Սեղան անարատ Տէրամօրն՝ ուր էր նուէրն սրբագործելի և բազմեցաւ յԱթոռն իւր։ Յաւարտել Պատարագամատոյց Արհւոյն զաղօթսն· Շնորհօք ու ձայ-նաւորութեամբ Տեառն մերոյ ու փրկչին Յսի Քսի, ևն· վերն յերկոտասան Արհեաց իջեալ յաւագ Սեղանոյն՝ ելին 'ի Սբյն Ստեփաննոսի Նախավկայի՝ յոր բազմեցուցեալ կա-յին Մասն Քրիստոսաբարձ փայտին կենաց· Աստուածամուխ սբ Գեղարդն· Աջք սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և Ա-րիստակեայ Հայրապետի· Շէջ մի ևս հին Անուռնաւ և Անօթ մի լցեալ օրհնելի նուիրովք ծաղկանց։ Բարձեալ սոցա զմի մի 'ի Սրբութեանցս արժանաւորեալ երկիւղա-ծութեամբ և անմռունչ հեծութեամբք՝ յանդիման եղեն Մեծին Քահանայապետի և Հրամանաւ Սորին պար ա-ռեալ բոլորեցան զերիւք կողմամբք սուրբ Կաթողիկէ

դէմ

դէմ ընդ դէմ միմեանց ցվախճան աղօթիցն: Այոցիկ այսպէս եղելոյ՝ Հրեշտակն 'ի մարմնի Աստուածապսակ Հայրապետն մեր առեալ 'ի ձեռս իւր զփրկութիւնագործ Մասն փայտին կենաց և զԳեղարդն Քրիստոսամուխ՝ յերկարեաց 'ի հեղումն յորդակայլակ արտասուաց և հոգեշարժ Ածահաս մաղթանաց. յետոյ իջոյց զայնս 'ի սբ Կաթսայն համդերձ նշխարօք Սբցն. և հեղեալ անդր զհին Միւռոնն և զօրհնեալ նիւթս ծաղկանց, վճարեաց զօրհնութիւնն ականյանդիման խուռներամ ամբոխին՝ որ անթարթափ ակնկալեալ սպասէր երկնիցն այցելութեան:

Յահընկէց զարմանս դրաւիմ և տագնապ զարհու-րանաց ունի զանձն իմ յառնուլս 'ի բերան զսարսափելին բան զարմանագործութե Ած յամ բարեխնամութեանց զրկեալս ժամնակի: Քանզի 'ի խաչակնքել Երանելի Հայ-րապետիս մերոյ փրկարար փայտիւն կենաց, սբ Գե-ղարդեամբն և Աջովք Սբցն զԿաթսայն սբ, նիւթն որ 'ի նմին անդէն առժամայն ինքնին ջերմանալ սկսաւ և հաշակեալ հանդիսացուցանել զպաշտելի սքանչելիս Ած մերոյ առ աչօք ամենեցուն, որք յապշումն պարտեալ լիաբերան օրհնէին զՊարգևատուն այնպիսի հրաշագոր-ծութեան վերահայցելով զյերկարութիւն կենաց և բա-հաստատութիւն Աթոռոյ Տն Տն ԵՓՐԵՄԻ Գե-րերջանիկ Կաթողիկոսի համօրէն ազգիս Հայոց:

'Ի վախճան հռչակաւորագոյն հանդիսիս Գերապա-տիւն Հայրապետն մեր հրամայեաց սեղանաւորել բա-զմութիւն ուխտաւորացն առ հասարակ զմեծամեծս և զփոքունս, զմեծատունս և զաղքատս անխտիր ըստ իւրաքանչիւրոցն արժանեաց: Ապա բազմեցաւ և ինքն Օծու-թիւնն Գերափառ 'ի Ճակատ սեղանոյն. յաջմէ Նորա դասք նախամտիր Արհեաց և այլ Եկեղեցինաց. յահեկէ՝ մեծանուն Աստիճանաւորք Ռուսաց և արգոյ Հայազգի իշխանք: Հասարակութիւնն բաժանեալ յերախանս ե-րախանս ուր հարիւր և ուր յիսուն, վայելէին առա-տապէս զպարգևս Աստուծոյ նորօրհնակ ուրախութեամբ և անլռելի օրհներգութեամբ: Յայսմ աւուր Ճաշեցին 'ի Սբ Աթոռս Էջմիածին 18 Եպիսկոպոսունք. 51 Վար-

դա-

դապետք. 77 Քահանայք. 24 Սարկաւագունք. 12 Ու-րարակիրք. 40 Դպիրք. 52 Աստիճանաւորք Ռուսաց. 238 Հայազգի իշխանք և սոսկականք. 277 ընիկ և նորեկ աղքատք և 178 տնանկ կանայք. ընդ ամէնն ոգիք 967 Թող զխառնիճաղանճ մարդակոյտն.

Յընթացս հացկերութին դասք զինուորական քնա-բահարաց և քաղցրեղանակ երաժշտական արուեստակա-նաց հարկանէին անդադար զնուագարանս իւրեանց. 'Ի նշան ցնծութեան, օրհնութեան և 'ի նշան բարեկենդանութեան. Իբրև սեղանն ընդմիջեցաւ՝ յոտն եկաց հրեշտակակերպ Քահանայապետս Մեծ հանդերձ բոլոր սեղանակցօքն և օրհնեաց զանդին կեանս երևելի Պատկերի Թագաւո-րութեան աներևոյթ Թագաւորին Թագաւորաց Ա՟ Ամենաբարեպաշտ Ինքնակալ Մեծ Կայսերն ամ՟ Ռուսաց ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ա՟. փրկագործողին Հայաստանեա. յանգութ բռնակալութենէ Պարսից. և յաղաղակել Նորա. Տէր կեցո՛ զԹագաւորն և լո՛ւր մեզ, ամ՟ հրաւիր-եալքն միաբերան աղաղակեցին. Կեցցէ՛ Ա՟ բ՟ջոյ և արբին զբաժակ ուրախութեան մաղթելով զերկարութե՟ կենաց ՆՈՐԻՆ կայսերական Մեծութե՟. ապա արբին վասն առողջութեան Պայծառափայլ Կոմսին Երևանայ ար-ժանաւոր երախտագիտութեամբ և իւրոյ Երանաշնորհ Վեհափառութեանն. Որ և յաւարտ սեղանոյն օրհնեալ զհամօրէն կենդանիս և զննջեցեալս ազգիս Հայոց՝ ար-ձակեաց զամենեսեան 'ի խաղաղութիւն՝ գոհացեալ զան-հուն մարդասիրութեանց Ամենասբ՟ Երրորդութեանն՝ որ օրհնեալն է յամ՟ յաւիտեանս.